




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

41813

1932

ՅՈՒՆ. Ա. ՅԱՎՈՂԵՎ

(19)

ԿՈՆՏՆԵՆՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԱՄՐԱՑՄԱՆ ՅԵՎ
ԿՈՆՏՆԵՍԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ
ԾԱՎԱԼՄԱՆ ՄԱՍԻՆ

338.1 (47)
3ա-25

ԿՈՒՍՅՐԱՏ = 1932 = ՅԵՐԵՎԱՆ

12001

338/6
167

44

ԿՈՆՏՆՏԵՆՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՔՍԱՆ ՈՒ ԱՄՐԱԴՆԴՄԱՆ ՑԵԼ
ԿՈՆՏՆՏԱՌԵՎՏՐԻ ԾԱՎԱԼՄԱՆ ՄԱՍԻՆ

1

Վերջին ժամանակներս կուսակցության Կենտրոնական Կոմիտեն և Ժողովրդական Կոմիտեները խորհուրդը մի շարք վորոշումներ են հրապարակել, վորոնց նպատակն է ամրապնդել կոլտնտեսությունները կազմակերպչորեն, տնտեսապես ու ծավալել կոլտնտեսական առևտուրը: Կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման հարցի մասին յեղած վորոշումներից գլխավորները հետևյալներն են.—

1. «Կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման հերթական ձեռնարկումների մասին» (ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի 1932 թ. փետրվարի չորսի վորոշումը):

2. «Անասունների հարկադիր հանրայնացման մասին» (ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի մարտի 26-ի վորոշումը):

3. «Կոլտնտեսությունների ղեկավար կադրերի ամրապնդման մասին» (ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի 1932 թ. մայիսի 10-ի վորոշումը):

ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի այդ խմբի վորոշումների հետ կապված է նաև ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի «Զիու պահպանման և զարգացման մասին» վորոշումը (1932 թ. մայիսի 27), նմանապես նաև հեղափոխական որինականության ամրապնդման մասին կառավարության վորոշումը (1932 թ. հունիսի 25-ը):

Կոլտնտեսական առևտրի զարգացման հարցին վերաբերող վորոշումներից գլխավորները հետևյալներն են.—

1. «1932 թվի բերքից հացամթերումներ կատարելու պլանի և կոլտնտեսական հացի առևտրի ծավալման մասին» (ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի 1932 թ. մայիսի 6-ի վորոշումը):

2. «Անասնաձկնորսության պլանի և կոլտնտեսությունների ու կոլտնտեսականների և մենատնտես աշխատավոր գյուղացիների մսի առևտրի մասին» (ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի 1932 թ. մայիսի 10-ի վորոշումը):


3. «Կոլտնտեսությունների, կոլտնտեսականների և մենատնտես աշխատավոր գյուղացիների առևտուր անելու կարգի և գյուղատնտեսական մթերքների առևտրի հարկը պակասեցնելու մասին» (ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1932 թ. մայիսի 20-ի վորոշումը):

Նման բնույթ ունեն նաև կառավարության վորոշումները՝ պետական մթերքումների չափը նվազեցնելու և բանջարեղենի, կաթի ու ձվի առևտուրը ծավալելու մասին:

Կուսակցության վերահիշյալ բոլոր վորոշումները կապված են միմյանց հետ և հետապնդում են յերկու հիմնական նպատակ:

Վորոշումների առաջին խումբն ամենից առաջ նկատի ունի ոժանդակելու կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման գործին:

Վորոշումների յերկրորդ խումբը, ոժանդակելով գյուղատնտեսական առևտուրության վերելքին, նպատակ ունի բարելավելու քաղաքների մատակարարությունը:



բարձրագույն վոչ թե միմիայն մթերման մեթոդի հիման վրա, այլ նաև յերկու մեթոդների, այն է՝ պետական մթերումների մեթոդի և խորհրդային առևտրի մեթոդի զուգորդման հիման վրա:

Վերջապես, այստեղ հիշված խնդիրներն և հետապնդում նաև ժողովուրդի և կենտրոնի հույսեր Ե-ի վերաբերյալ, բերքահավաքի կամպանիայի կիրառման մասին:

2.

Նա, ով ուշադրություն դարձրեց կենտրոնական կոմիտեյի վերահիշյալ վորոշումները կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամբողջական հարցերի շուրջը—միանգամից կրճատել, վոր նրանք կառուցված են նիշտ նույն հիմունքների վրա և զարգացնում են կոլտնտեսական շինարարություն մասին կենտրոնական կոմիտեյի նախորդ կարևորագույն վորոշումները:

Իսկապես, նրանց գլխավոր նպատակն է, նորից ու նորից ընդգծել այն, վոր «կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամբողջական մեթոդը ներկայումս, ամենից առաջ, ԿՈՒՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԵԼԱԹԻՆ 2 ԵՎԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՅԵՎ ԱՄՐԱՊԵՐՄԱՆ ԽՆԴԻՐՆ Ե» (Կենտրոնի 1932 թ. փետրվարի 4-ի վորոշումը):

Նրանց գլխավոր խնդիրն է, նորից ու նորից նախադրույթներ կուսակցական կազմակերպություններին «գյուղատնտեսական արտելի ձևի վրայով, վորը դեռ բավարար չափով չի ծավալվել և չի ամրապնդվել, քաջելու վտանգից» (Կենտրոնի 1932 թ. փետրվարի 4-ի վորոշումը):

Ճիշտ նույն խնդիրները, համարյա նույն ձևակերպումով, առաջադրում է յին կենտրոնական կոմիտեյի բոլոր նախորդ վորոշումները՝ կոլտնտեսական շինարարության մասին:

Հիշենք կարևորագույն դոկումենտները:

Յերկու և կես տարի առաջ—1930 թ. հունվարի 6-ին—կենտրոնական կոմիտեն, կոլեկտիվացման տեմպերի մասին իր պատմական վորոշման մեջ ամբողջ հստակությամբ մատնանշեց բոլոր կուսակցական կազմակերպություններին, վոր տվյալ ետապում կոլտնտեսական հիմնական ձևը գյուղատնտեսական արտելն է:

1930 թ. մարտի 2-ին, ընկ. Ստալինը խորագրանելով կուսակցական զծի խոտորումները կոլտնտեսական շինարարության մեջ, առանձնահատուկ պարզությամբ և հստակությամբ առաջադրում է հետևյալ թեղիսը.—«Գյուղատնտեսական արտելը տվյալ մոմենտում կոլտնտեսական շարժման սխառմի հիմնական ողակն է» (Ստալին, «Լենինիզմի հարցերը», էջ 600):

1930 թ. մարտի 10-ին, կենտրոնական կոմիտեն իր վորոշման մեջ «կոլտնտեսությունների արտելային ձևից կոմունային թռիչք դործելու վորձերը» խարանում է վորպես միանգամայն անթույլատրելի և դործին վնաս հասցնող յերևույթ:

1930 թ. հուլիսին, կուսակցության 19-րդ համագումարը, կոլտնտեսական շարժման հանրազումարն անելով, վորպես ղեկավարության կարևորագույն դրույթ, բոլոր կուսակցական կազմակերպություններին առաջադրում է դարձյալ նույն թեղիսը.—«Տվյալ ստալիսիզմ կոլտնտեսության հիմնական ձևը գյուղատնտեսական արտելն է»:

1931 թ. մարտի 17-ին, նաև խորհուրդները բարձրագույն որդանը—խորհուրդների 6-րդ համագումարը—միլիոնավոր կոլտնտեսականների կոլտնտեսական կյանքի առաջին տարվա վորձի հանրազումարն անելով, նորից ու նորից ընդգծում է.—«Զարգացման տվյալ ստալիսիզմ կոլտնտեսական շարժման հիմնական ձևը գյուղատնտեսական արտելն է»:

1931 թ. սեպտեմբերի 2-ին, առանձին վայրերում նկատված նորից վաղեմություն, կոլեկտիվացման ավարտումն շտապեցնելու, կենտրոնական կոմիտեյի առաջին և կոլեկտիվացման տեմպերի «անցնելու» տեղեկությունները առձու-

թյամբ, կենտրոնում հետագա կոլեկտիվացման և կոլտնտեսական տնտեսության հետագա բնական բոլոր աշխատանքների անկյունքարն է համարում «կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամբողջումը նրանց զարգացման ներկա արտելային աստիճանում»:

ՅԵՐԵՆ այդ վորոշումների հետ, վորոնք ընդգրկում են կոլտնտեսությունների զարգացման համարյա յերկու տարին, վորոնք ընթացում կոլտնտեսությունների դարձան գյուղատնտեսական մթերքի հիմնական արտադրողները մեր յերկրում, համեմատենք կենտրոնական կոմիտեյի վերջին, 1932 թ. փետրվարի 4-ի և մարտի 26-ի վորոշումները, ապա յուրաքանչյուր վոր կարող է համոզվել, վոր նրանք բոլորն ել մի կետի յեն խմբում գյուղատնտեսական արտելը հիմնական ձևն է, այն պետք է ամրապնդել. կոլտնտեսությունների զարգացման տվյալ ստալիսիզմ արտելից կոմունային անցնելու արհեստական արագացման յուրաքանչյուր վորձ անթույլատրելի յեն, կուսակցությունը թույլ չի տա գյուղատնտեսական արտելի այդ ձևից և վոչ մի թռիչք:

Ինչո՞ւ յուրաքանչյուր անգամ, կոլտնտեսական շարժման յուրաքանչյուր ետապում, բառացիորեն կոլտնտեսական շինարարության հարցերի մասին յուրաքանչյուր վորոշման մեջ կուսակցությունն այդպիսի համառությամբ կրկին ու կրկին վերագրում է նույն հարցին, շարունակ նոր ուժով ընդգծում է, վոր գյուղատնտեսական արտելը կոլտնտեսական շարժման գլխավոր ու հիմնական ձևն է:

Այդ հարցի պատասխանը միայն մեկ կարող է յինել: Դա կենտրոնական կոմիտեյի կողմից արվում է նրա համար, վորովհետև գյուղատնտեսական արտելի ձևն առաջադրվել է աշխատավոր գյուղացիության յայն մասում, յերի կողմից, վորպես ամենից ավելի համապատասխանող յր արմատական շահերին, և միաժամանակ նրա համար, վորովհետև զարգացման տվյալ ետապում կոլտնտեսական շարժման այդ ձևի պաշտպանումը բղիթում է կոլտնտեսական շինարարության մարքսիստական-լենինյան արմատական սկզբունքներին:

3.

Ինչո՞ւմ է կայանում գյուղատնտեսական արտելի ուժը:

Ինչո՞ւմ է կայանում նրա տարբերությունը կոլտնտեսական շարժման մյուս ձևերից:

Ինչո՞ւ գյուղացին հանդիպում այդ ձևն և ընտրել, վորպես գլխավոր ձև:

Ինչո՞ւ այդ ձևը տարածվել է ամենուրեք, դարձել է համարյա ընդհանուր մեր յերկրի տերիտորիայում:

Այդ հարցերի ուղղակի պատասխանը տվել է ընկ. Ստալինն յր 1930 թ. մարտի հոգվածներում, յսկ դրանից հետո՝ կուսակցության 16-րդ համագումարն յր վորոշումներում:

1930 թ. մարտին ընկ. Ստալինը հետևյալ ձևով է նկարագրում գյուղատնտեսական արտելի ելույթը.—

«Գյուղատնտեսական արտելում հանրայնացված են արտադրության հիմնական միջոցները՝ գլխավորապես հողահատիկային տնտեսության գլուխը — աշխատանքը, հողագործումը, մեքենաները և այլ ինվենտարը: Բախատող անասունները, տնտեսական շենքերը: Չեն հանրայնացվում—տնտեսվում հողերը (փոքրիկ բանջարանոցները, այգիները) բնակության շենքերը, կաթնատու անասունների վորոշ մասը, մանր անասունները, ընտանի թռչունները և այլն» (Ստալին, «Լենինիզմի հարցերը», էջ 600):

Դրանից անմիջապես հետո, կոլտնտեսական շինարարության հարցերի մասին կուսակցության 16-րդ համագումարի վորոշումներում պարզաբանված է. թե ինչո՞ւ հատկապես գյուղատնտեսական արտելը և վոչ թե կոմունան է դարձել կոլտնտեսական շարժման գլխավոր ձևը կոլտնտեսական զարգացման

տվյալ ետապում: Կուսակցության 16-րդ համագումարի վերջում հերքում
տված է:—

«Պահանջել, վարդապետ գյուղացիները, արտել մտնելով, անմիջապես
հրաժարվեն ամեն տեսակ անհատական ունակություններից ու շահերից,
հասարակական կից անհատական ունակությունները (կով, վոլյաթ,
քոչուն, տնամերձ բանջարանց) վարելու հնարավորությունից, իրենց հա-
մար կողմնակի վատասկի ոգտագործման հնարավորությունից և այլն —
դա նշանակում է մտաքննարկման վարժարանի պարունակը»:

Նշանակում է, վոր գյուղատնտեսական արտելի ուժը, նրա առանձնա-
հատուկ առավելությունը կոլտնտեսական զարգացման տվյալ ստորագրում
այն է, վոր «նա ավելի մատչելի չե գյուղատնտեսական լայն մասաների գի-
տակցությանը» (Ստալին, «Լենինի միջոցներ», էջ 620), վոր դրանում
է կայանում միլիոնների վարժարանը՝ կոլտնտեսական և անհա-
սարակ կոլտնտեսության հասարակական շահի գոլգործումը կոլտնտեսական
գյուղացու մասնավոր շահի հետ, առանց վորի գյուղացին կոլտնտեսությու-
նը մտնի:

Գյուղացին կոլտնտեսական արտելը գերադասեց վոր միայն անհատական
տնտեսությունից, այլև հողի մշակման դաշտավարական ընկերակցությունից,
վորովհետև գյուղատնտեսական արտելը նրան հնարավորություն տվեց մի-
թամանակ ոգտագործելու խոշոր միացյալ տնտեսության ոգտաները դաշ-
տավարական բնագոյացում և մեքենատրակտորային կայանների արակտոր-
ներն իր տնտեսության մեջ: Դրանով իսկ ջարդ ու փշուր չեղավ աղբի կու-
լակային «թերության», աղբի, վորոնք ժխտում էին, թե կոլտնտեսություն-
ները հանդիսանում են գյուղացիական մասաների սոցիալիզմի ճանապարհ
անցնելու հիմնական ուղին, և գլխավորում էին կուլակության, վորպես
դասակարգի, լիկվիդացիայի, առանց վորի հնարավոր չէր լինի հանել
գյուղի զարգացման սոցիալիստական ուղու հաղթանակին:

Գյուղացին գյուղատնտեսական արտելը գերադասեց կոմունայից նրա
համար, վորովհետև գլխավորի (դաշտավարության գծով արտագրության
հիմնական միջոցները) հանրայնացումից հետո, նրա մոտ միաժամանակ մնաց
տնտեսավարելու վորոշ հնարավորություն՝ յերկրորդական, անհատական
չբացուցիչ տնտեսության նկատմամբ:

Այդ գոլգործությունը ուժեղ և գյուղատնտեսական արտելը:

Ահա թե ինչո՞ւ մեր կուսակցությունը, մի կողմից, ինչպիսի հնարավոր
է, անում է, վորպեսզի ամրացնի արտելի տնտեսության հանրայնացված մասը
(այստեղ կարևորագույն դեր է խաղում տրակտորը, վորը հանրայնացված
տնտեսությունը ժամանակակից բարձր տեխնիկայի բազա չե տալիս), իսկ
մյուս կողմից՝ միաժամանակ զգաստորեն հետևում է, վորպեսզի վորտեղ էլ
վոր լինի, ով էլ վոր լինի, չփորձի անժամանակ բարձր կոլտնտեսական
այն լրացուցիչ, անհատական տնտեսությունը: վորը պահպանվում է գյու-
ղատնտեսական արտելի ժամանակ:

Ահա թե ինչո՞ւ նաև այդ բնագոյացում, ինչպես բոլոր մյուս բնագո-
յացումներում, «ձախերը» գործնականում անշեղորեն հրապարակ են դուրս գա-
լիս, վորպես բացահայտ աղբի դաժնակիցներ:

Իսկապես, «ձախը», այս կամ այն վայրում, հանրայնացնելով կոլտնտե-
սական վերջին կովը, կարծում է, վոր նա դրանով մոտեցնում է կոմունայի
գալուստը, իսկ գործնականում վոչնչացնելով կոլտնտեսական այն լրացու-
ցիչ անհատական տնտեսությունը, վորը նա — կոլտնտեսական — առայժմ
բարձր է գնահատում, և դրանով իսկ վախեցնելով ու փախցնելով գյուղացուն
կոլտնտեսությունից, հարվածում է այն համայնացված տնտեսությանը, վորն
արտելի մեջ գլխավորն է հանդիսանում, այսինքն՝ հանդես է գալիս ամենա-

ապրական բացահայտ աղ օպորտունիստի — կոլտնտեսության թշնամու ու
կուլակի արբանյակի դերում:

Այսպես կրկնում ենք, — գյուղատնտեսական արտելի ուժը, այն պատճա-
ռով, վորի համար տվյալ ետապում գյուղացին կոլտնտեսության բոլոր մյուս
ձևերի մեջ գերադասեց այդ ձևը, կայանում է նրանում, վոր գյուղատնտե-
սական արտելը խոշոր համայնացված տնտեսության ոգտաներն ու առավե-
լությունները յուրաքանչյուր գյուղացու համար կոլտնտեսական կյանքի ա-
մենորոյա պրակտիկայում ամենալավ և ամենից ավելի մատչելի ձևով գոլգոր-
դել, միացրել է կոլտնտեսականի մասնավոր կյանքի շահի հետ:

4

Գյուղատնտեսական արտելի այն հիմնական առանձնահատկությունը,
վորը նրան դարձնում է կոլտնտեսական շարժման գլխավոր և հիմնական ձևը
մեր յերկրի ճշող մասում, ինչպիսի կարճատև, միայն մեկ-յերկու տարվա
համար բնորոշ բան է:

Ընդհանրապես, դործը վերաբերում է կոլտնտեսական շարժման այնպիսի
առանձնահատկությանը, վորն, անտարակույս, տեսական բնույթ ունի: Կոլ-
տնտեսությունները, անտարակույս, մի շարք տարիների ընթացքում կանց-
նեն գյուղատնտեսական արտելի ստադիան:

Ենթադրենք, թե ինչ է առում այդ հարցի առթիվ կուսակցության
16-րդ համագումարը՝ «կոլտնտեսություններում գյուղացիք իրենց մանր-սե-
փականատիրական հոգեբանությունը, մանր մասնավոր տեխնիկական տեխնի-
կաներից ժառանգած մասնավոր տնտեսական կուսակցման տենչը վերջնակա-
նապես կվերացնեն միմիայն տարիներ շարունակ համառ աշխատանք կատա-
րելով կոլտնտեսությունների համար խոշոր մեքենայացված տնտեսության
բազա ստեղծելու նպատակով, համառ աշխատանք կատարելով կոլտնտեսա-
կաններից կադրեր ստեղծելու և կոլտնտեսական ամբողջ մասային կուլտու-
րային բարձրացնելու ուղղությամբ»:

Միմիայն անհուսալի բյուրոկրատը կարող է կարծել, թե գյուղատն-
տեսական արտելն այժմ արդեն բավականաչափ ամրացել է, թե գյուղատն-
տեսական արտելի առաժնային արդեն ամենուրեք անցել ենք: Կոլեկտիվ տն-
տեսության ծավալման ամբողջ փորձը (մասնավորապես անցյալ տարվա
բերքահավաքի և այս տարվա դարնանացանի կամպանիայի փորձը) կրկին
ու կրկին ցույց է տալիս, թե վորքան իրավացի չե ՀամԿ(բ)Կ-ի կենտրոնա-
կան կոմիտեն, վորը մասնանշում է, թե գյուղատնտեսական արտելը մինչև
այժմ էլ «ոչնո բավականաչափ չի ծավալվել և չի ամրացվել» (ՀամԿ(բ)Կ-ի
կենտկոմի 32 թ. փետրվարի 4-ի վորոշումը):

Պարզ է, վոր գյուղացին, կոլտնտեսություն մտնելով, իսկույն չի դա-
դարել գյուղացի լինելուց: Պարզ է, վոր գյուղատնտեսական արտելում, ան-
հատականի փոխարեն արտագրության հիմնական միջոցների հանրային սե-
փականության ստեղծվելը լավագույն պայմաններ է ստեղծում նախկին գյու-
ղացուն վերափոխելու համար, սակայն այդ վերափոխման ժամանակամիջոցը
կախված է նրանից, թե վորքան արագ մեզ կհաջողվի ավարտել գյուղատնտե-
սական արտագրության մեքենայացումը, վորքան արագ մեզ կհաջողվի
դաստիարակել իսկական կոլտնտեսական կադրեր: Վերացնելով կուլա-
կությունը համատարած կոլեկտիվացման պրոցեսում, վոչնչացնելով այն
հողը, վորը ծնում է կապիտալիզմ, մենք միևնույն ժամանակ չենք կարող
առանձին մոմենտներում և առանձին շրջաններում խուսափել կոլտնտեսու-
թյունների մեջ կուլակային ազդեցությունը թափանցելուց, հետևապես նաև
միջակների վորոշ մասի տատանումներից, մինչև վոր չավարտենք գյուղա-

արտոնական արտադրութեան մեքենայացումը և չստեղծենք կոլտնտեսական համապատասխան կադրեր:

Միմիայն կույրը կարող է չտեսնել, վոր դեռ տարիներէ աշխատանք է պահանջվելու գյուղատնտեսական արտելն ամրացնելու համար, գյուղացի կոլտնտեսականներէ մանր-սեփականատիրական հողերանութիւնը վերջնականապէս վերացնելու համար, աշխատանքի կարգապահութեան նոր, հասարակական ձևերի վերջնական հաղթանակի համար: Իսկ այդ նշանակում է, վոր այդ տարիները, առավել նման կուսակցութիւնից պահանջելու յեն պայքար մղել ուղորտունիղմի և մանավանդ տվյալ ետապի գլխավոր փութանգ աջ թեքման դեմ:

Այդ բոլորը սիրում են մոռանալ շատ պրակտիկներ, վորոնք կոլտնտեսական շարժման ամեն մի նոր ետապում, կոլտնտեսական ամեն մի նոր հաջողութեան դեպքում պատրաստ են կրկին ու կրկին փորձել թուիչը դործել գյուղատնտեսական արտելի ետապի վրայով, կուսակցութիւնից «առաջ» վաղել, և վորոնք սակայն դործնականորեն մոռում են միևնույն տեղում՝ ուղորտունիստական ճահճում:

Այդ հարցերի առթիվ Լենինն ասել է՝
«Մանր հողագործին վերամշակելու, նրա հողերանութիւնն ու սովորութիւնները վերամշակելու դործը սերունդներ պահանջող դործ է: Լուծել այդ հարցը մանր հողագործի նկատմամբ, առողջացնել, այսպէս ասած, նրա ամբողջ հողերանութիւնը կարող է միայն նյութական բաղան, տեխնիկական, տրակտորներէ և մեքենաների դործադրումը հողագործութեան մէջ մասսայական մասշտաբով, ելեկտրիֆիկացիան մասսայական մաշտաբով» (Լենին, հատոր 26, էջ 239):

Ընդ. Ստալինն այդ հարցերի առթիվ ասել է՝
«... Պետք է կրկին դեռ շատ աշխատել՝ կոլտնտեսական գյուղացուն վերափոխելու, նրա ինքնիշխանութեան հողերանութիւնն ուղղելու, նրան սոցիալիստական հասարակութեան իսկական աշխատավոր դարձնելու համար: Յեւ այդ բանն այնքան ավելի արագ կկատարվի, վորքան ավելի շուտ մեքենայացվեն կոլտնտեսութիւնները, վորքան ավելի շուտ տրակտորացվեն նրանք» (ՍՍՍՀ-ի, «Լենինի ճիշտ հարցերը», էջ 633):

Այստեղ խոսքը վերաբերում է վոչ միայն այսօրվա խնդիրներին, այլև այնպիսի խնդիրներին, վորոնք պահանջում են ամբողջ կուսակցութեան աշխատանքը մի շարք տարիներէ ընթացքում:

Հարկավ այդ ուղին մի քիչ ավելի յերկար և ավելի դժվարին է, քան այն, վորի վրա՝ հակառակ Լենինի և Ստալինի ցուցումներին, պատրաստ են վորք դնել տեղական առանձին աշխատողներ (ինչպէս կոլտնտեսութիւններէ մեկէ նախագահը, վորն աշխատում էր համոզել, թէ չարժէ առանձնապէս գլուխ ցավացնել կովերի առթիվ, վորովհետեւ «բավական է յերկու որ և յերկու գիշեր աշխատել կոլտնտեսական ակտիվի հետ և կոլտնտեսականները կընդունեն այն ամենը, ինչ վոր ուզենք»), բայց դրա փոխարեն դա միակ ուղին է, վորն ասպնջում է գյուղատնտեսական արտելի ամրացումը և

Հետագայում նրա անցումը — մեքենատրակտորային կայանների միջոցով և մեքենատրակտորային կայանների բազայի վրա, կոլտնտեսական աշխատանքի բարձր աստիճաններին:

Այն հիման վրա, վոր գյուղատնտեսական արտելը և վոչ թէ կոմունան է կոլտնտեսական շարժման հիմնական ձևը, այն հիման վրա, վոր այդ գյուղատնտեսական արտելի պարտադիր է հանրային տնտեսութեան հետ միասին նաեւ անձնական, առանձին կոլտնտեսականների տնտեսութիւնը, — մի քանի «տեսարաններ» պատրաստ են վիճելի դարձնել գյուղատնտեսական արտելի սոցիալիստական բնույթը, կամ համարել կոլտնտեսութիւնը վոչ թէ տնտե-

սութեան սոցիալիստական տիպը, այլ լոկ մի տնտեսութիւն, վորտեղ կան միայն վորոշ սոցիալիստական տարրեր:

Դեռևս 1929 թ. դեկտեմբերի 27-ին, ընդ. Ստալինն իր «ՍՍՀՄ-ի ագրարային քաղաքականութեան հարցերի շուրջ» ճառում, վիճարանելով մի քանի տնտեսագետների հետ, ուղղակի պատասխան տվեց այդ հարցին, հաստատելով, թէ «կոլտնտեսութիւնը, վորպէս տնտեսութեան տիպ, սոցիալիստական հասարակութեան ձևերից մեկն է» (Ստալին, «Լենինի ճիշտ հարցերը», էջ 582):

Այդ ժամանակից անցել է 2 և կես տարի, վորի ընթացքում ավարտվել է կոլեկտիվացումը ՍՍՀՄ-ի կարեւորագոյն հացահատիկային ու տեխնիկական մշակութիւնների շրջաններում: Մենք ունենք կոլտնտեսական շինարարութեան իսկական կենդանի փորձ, մի շինարարութիւն, վորին մասնակցում են տասնյակ միլիոնավոր մարդիկ, և այդ փորձը ցույց է տալիս, վոր չնայած կոլտնտեսութիւններում դեռ պահպանվում է վորոշ անհավասարութիւն, քանի վոր պահպանվում է կոլտնտեսականների լրացուցիչ մասնավոր տնտեսութիւնը և կոլտնտեսականները լրացուցիչ յեկամուտ ունեն շուկայից, այնուամենայնիվ կոլտնտեսութիւնն ամրանում է վորպէս արտադրութեան սոցիալիստական ձև, վորի էությունը վորոշվում է արտադրութեան հիմնական միջոցների հանրային սեփականատիրութեամբ:

Միմիայն բացարձակ արեղիստներն են, վոր կարող են վիճելի դարձնել գյուղատնտեսական արտելի սոցիալիստական էությունն այն պատճառով, վոր այդ գյուղատնտեսական արտելում տնտեսութեան գլխավոր հանրային էիմֆի հետ միասին գոյութիւն ունեն տնտեսութեան մի քանի լրացուցիչ անհատական տարրեր:

Արտելի դասակարգային բնույթը վորոշվում է իհարկէ վոչ թէ նրանով, վոր կոլտնտեսականը պահպանել է, կամ ձեռք է բերել կով և ցանել է իջ ամբողջ տնամբձ բանջարանոցը, այլ նրանով, վոր և գլխավորն է, տնտեսութեան հիմքը՝ դաշտարուծութիւնը և այդ դաշտարուծութեան հետ կապված արտադրութեան հիմնական միջոցները՝ մեքենաներն ու ձիերը, հանրայնացված են: Ընդ վորում արտադրութեան այդ հանրայնացված միջոցներով գյուղացի կոլտնտեսականներն աշխատում են նախ՝ պիտանքի հոգի վրա և, յերկրորդ՝ արտադրութեան ավելի ու ավելի անդա՝ ֆանկտիւրային պիտանքի միջոցներով (տրակտորներ և բարդ մեքենաներ մեքենատրակտորային կայաններում):

Ահա թէ ինչու «տեսարաններ», թէ՛ քանի վոր կուսակցութիւնը վոչ միայն արդեւ չի հանդիսանում, այլև նպատում է կոլտնտեսականների վորոշ լրացուցիչ տնտեսութեան դարգացմանը, ապա ուրեմն գյուղատնտեսական արտելը տնտեսութեան սոցիալիստական ձև չէ, այդ նշանակում է միայն կրկնել պարոն Տրոցկու չարամիտ հակահեղափոխական դրաքարութիւնը կոլտնտեսութիւնների դեմ, վորը (պարոն Տրոցկին) իր 1930 թ. փետրվարի «Բյուրխենում» հայտարարել էր, թէ՛ «Յեթն կոլտնտեսութիւնն զգալի չափով ավելի ոգուտ տա համեմատած մանրացրել տնտեսութեան հետ, ապա կոլտնտեսութիւնների միջոցով շերտավորումն ավելի արագ կընթանա, քան միջին տիպը»:

Հարկավ այն հոգվածի ամեն մի ընթերցող իրավունք կունենա ասելու, լավ, յեւ համաձայն եմ այդ բոլորին: Այդ բոլորը բացարձակապէս անվիճելի չեն, սակայն ինչ կարիք կա դարձյալ ու դարձյալ կրկնել այն, վորը լավ հայտնի չէ կուսակցութեան յուրաքանչյուր անդամին, վորը գոված է կուսակցարարութեան բոլոր դասադրքերում, կոլտնտեսական շինարարութեան բոլոր դասադրքերում, ինչ կարիք կա դարձյալ ու դարձյալ վերադառնալ այն բանին, վորն այսօրեանկա ճիշտագոյն է դարձել: Այդ հարցին կարելի չէ միայն մի պատասխան տալ՝ կուսակցութիւնը հարգադրված է կրկին ու կրկին վերադառնալ գյուղատնտեսական արտելի հար-

ցին, գյուղատնտեսական արտելի վրայով թեթևամտորեն թռիչք գործելու փորձերի դեմ պայքարելու անհրաժեշտությունը հարցին, հասկապես այն պատճառով, վոր գործնականում մենք ունենք կոլտնտեսական շինարարության հիմնական լինելու սկզբունքների բավականաչափ խեղաթյուրումներ: Իսկ չե՞ք վոր գյուղացին խորհրդային իշխանության մասին, կոլտնտեսության մասին դատում է վոր թե այն հիման վրա, ինչ վոր գրված է բանահեռում, վոր թե այն հիման վրա, ինչ վոր գրված է դասագրքում, այլ այն հիման վրա, թե ինչ է կատարվում իրականում, այն էլ վոր թե ամբողջ ԽՍՀՄ-ի և նույնիսկ վոր թե նրա ամբողջ շրջանի, այլ նրա գյուղում և նրա կոլտնտեսության մեջ:

Իրենք յերկու որինակ, վորոնք կայարդեն, թե ինչու յն հարկադրված մեր կուսակցությունը նորից վերադառնալ վաղուց լուծված այդ բոլոր հարցերին: Առաջին որինակը վերաբերում է անասնաբուծության զարգացման բնագավառին, յերկրորդ որինակը վերաբերում է կոլտնտեսությունների գեկալարման մեթոդների բնագավառին:

Ահանք առաջինից: Քիչ չեն այնպիսի աշխատողներ, վորոնք հասկանում են, վոր բանվորները կարող են զարգացնել ճազարարությունը և դա անհրաժեշտ ու ուղտակար է, և միևնույն ժամանակ չգիտես ինչու յենթադրում են, թե կոլտնտեսական գյուղացուն վայել չն պահպանել սեփական կովը կամ ունենալ խոզ կամ նույն այդ ճազարները: Մինչև այժմ էլ տեղերում քիչ չեն այնպիսի մարդիկ, վորոնք պատրաստ են իրենց պահեստում պահել ծաղրի արծանի այն «տեսությունը», թե կոլտնտեսականի մոտ կով կամ խոզ լինելը կոլտնտեսության կործանումն է և համենայն դեպս կոլտնտեսության վորպես տնտեսության սոցիալիստական տիպի՝ կործանումն է: Կան նաև այնպիսի պատուհաս «աղմինխտրատորներ», վորոնք կովը խանդարում և կառավարել, վորոնք դատում են, թե «կոլտնտեսությունն ավելի հեշտ է կառավարել, յեթե կոլտնտեսականը կով չունենա»:

Այս դարուն մի շարք շրջաններում յերևան յեկան այդ տեսակ բավական բազմաթիվ խոտորոզներ, վորոնք պատրաստ էին գյուղատնտեսական արտելի ամրացնելու գործը փոխարինել գյուղացու կովը հանրայնացնելու փորձերով:

Կուսակցության Կենտրոնական Կոմիտեն իսկույն հարվածեց այդ փորձերը, նորից բացատրելով, վոր «միայն կոլտնտեսության քննամիներն են, վոր կարող են քույլ տալ հարկադրաբար կանրայնացնել առանձին կոլտնտեսականների կովերն ու մանր անասունները», առաջարկելով վտարել կուսակցությունից նրանց, ովքեր փորձեր են անում հարկադրաբար հանրայնացնել կոլտնտեսականների կովերն ու մանր անասունները: (ՀամԿ(բ)Կ-ի Կենտկոմի 1932 թ. մարտի 26-ի վորոշումը):

Դրանով իսկ կուսակցության Կենտրոնական Կոմիտեն վոր միայն խից նրանց ձեռներին, ովքեր կցանկանային դարձյալ «թռիչք գործել» գյուղատնտեսական արտելի վրայով, այլև դրա հետ միասին ցույց տվեց, թե ինչ ուղիներով է ընթանալու այսուհետև անասնաբուծական պրոբլեմի լուծումը: Վորովհետև պարզ է, վոր անասնաբուծության ասպարիզում, մեր ունեցած զգալիորեն վերացումը հետադարձում պետք է ընթանալ յերկու ուղիով: Մի կողմից անհրաժեշտ յեն անասնաբուծական խորհանտեսություններ և կոլտնտեսական ապրանքային ֆերմաները, 68 հազար կոլտնտեսական ապրանքային ֆերմաներում ներկայումս կենտրոնացրել են 6 միլիոն գլուխ խոզոր յերկրորդ վոր անասուն և 2 միլիոն խոզ, դրանով իսկ հիանալի բազա յն հատկվել կոլտնտեսական ապրանքային անասնաբուծության հետագա աճման համար: Միևնույն վոր դրույն անասուններ են կենտրոնացված անասնաբուծական խորհանտեսություններում, վորոնք դեռ մինչև այժմ էլ ունենալով հանգերձ խոշորագույն թերություններ և անտնտեսավարություն իրենց տշխատանքում, 1932 թվականին իրենց հանձնելիք մթերքի քանակը, համեմատած 1931 թվականի հետ, ավելացնելու յեն ավելի քան 50 տոկոսով (չհաշված

այն մթերքը, վորը վաճառում են նրանք իրենց խանութներում): Այս է անասնաբուծական պրոբլեմի զգալիորեն վերացնելու հիմնական ուղին: Մյուս կողմից՝ խրեխտնաբուծությունների և կոլտնտեսական ապրանքային ֆերմաների հետ միասին ու նրանց կողքին վոր միայն պահպանվելու յն, այլև անելու յն առանձին կոլտնտեսականների անասնաբուծությունը: Կենտրոնական Կոմիտեի 1932 թ. մարտի 26-ի վորոշման մեջ ուղղակի ասված է՝ «Կուսակցության խնդիրն այն է, վոր յուրաքանչյուր կոլտնտեսական ունենա իր կովը, մանր անասունը, քոչուրը»: Կենտրոնական Կոմիտեի այդ վորոշմամբ և կոլտնտեսական մսի առևտրի վերաբերյալ հաջորդ վորոշմամբ, կոլտնտեսականին ասված է՝ զարգացրու ըս անասունը և վաճառիր չուկայով, պաշտամով, վոր միտմամբ արել արդեն կարգադրես ըս պետական պարտավորությունները, — բանվորագյուղացիական պետությունը վոր միայն դեմ չե դրան, այլև ընդհանրապես, կողմնակից է: Պետությունը կողմնակից է, վոր կոլտնտեսականն ունենա իր կովը, մանր անասունը և թոչուրը, վորովհետև այդ են պահանջում անասնաբուծության զարգացման շահերը, վորովհետև դա լախում է գյուղատնտեսական արտելի հիմքից իսկ, գյուղատնտեսական արտել, վորտեղ գուղակցված են հանրային դաշտաբուծությունը և ապրանքային անասնաբուծական ֆերման՝ յուրաքանչյուր կոլտնտեսականի սեփական անասունների (կով, մանր անասուն, թոչուր) պահպանմամբ և զարգացմամբ:

7.

Ահանք մյուս որինակին, վորը ցույց է տալիս, թե ինչու կուսակցությունը պետք է կրկին ու կրկին վերադառնա հին հարցերին: Այդ որինակը վերաբերում է կոլտնտեսությունների գեկալարման բնագավառին: Խոշոր ել դիտեն, թե կուսակցության 16-րդ համագումարի և խորհուրդների 6-րդ համագումարի վորոշումներում, վորքան պարզորոշ կերպով շեշտված է կոլտնտեսության և խորհանտեսության տարբերությունը, ինչպիսի խստություններ այդ վորոշումներում հերքված կոլտնտեսություններն ու խորհանտեսությունները նույնացնելու փորձերը, ինչպիսի վճռականությամբ շեշտված է այն դատար, վոր «կոլտնտեսությունները հանդիսանում են այնպիսի ձեռնարկություններ, վորոնք հիմնված են գյուղացիների կողմից, վորոնք կամավոր կերպով միացրել են արտադրության իրենց միջոցները և վարում են իրենց տնտեսությունը պետության պատկանող հողի վրա: Մեզ նմին կոլտնտեսության տերերն են կոլտնտեսականները... մինչդեռ խորհանտեսությունները հանդիսանում են պետական ձեռնարկություններ, վորոնք տերը պետությունն է: Դժբախտաբար, չնայած կուսակցության այդ ցուցումներին, չնայած, վոր աշխատավոր գյուղացու նկատմամբ կամայականությամբ ու սոսկ վարչարարություն անթույլատրելի լինելու հարցի մասին կան կուսակցության բացառիկ չափով պարզորոշ ցուցումներ, իրականում քիչ չեն այնպիսի դեպքեր, յերբ կոլտնտեսությունների նկատմամբ կիրառվում են վարչարարության անթույլատրելի պրիոմներ, կոլտնտեսությունների հետ վարվելու անթույլատրելի պրիոմներ:

Այլապես ինչո՞վ կարելի յն բացատրել, յեթե վոր կուսակցության այդ ցուցումների անտեսումով, այն դատար, վոր Ուկրաինայի մի շարք շրջաններում այս դարնան նախորդակին տեղի ունեցավ կոլտնտեսությունների մասնաբաժանումը ըստ էության հարկադրական ամրապնդում:

Այլապես ինչո՞վ կարելի յն բացատրել, յեթե վոր կուսակցության ցուցումների անտեսումով, այն դատար, վոր առանձին շրջաններում մենք ունենք դեպքեր, յերբ մի տարվա ընթացքում շրջանային որդանների և դասագրքային խաղորների նշանակման կարգով, կոլտնտեսության մեջ փոխվել է մոտ մի տասնյակ նախագահ: Մինչդեռ բաղրին հայտնի յն, վոր գյուղատնտեսական արտադրությունը բարդ գործ է, շատ տեսակետից ավելի բարդ, քան գործարանային արտադրության կառավարման գործը, վորովհետև գործարանում մենք գործ ունենք ավելի վորակյալ մարդկանց հետ, քան կոլ-

տնտեսության մեջ, ավելացրած դրան մեխանիզմները, վորոնք կարող են աշխատել հաստատապես սահմանված կարգով: Իսկ գյուղատնտեսության մեջ, մարդիկ միայն նոր են սկսել սովորել խոշոր հանրային տնտեսությանը, և բացի դրանից, մենք գործ ունենք ուղի հետ, վորի յուրաքանչյուր մասը պետք է գիտենալ՝ մոլորությունը վոչնչացնել կարողանալու համար, ծանոթանալ էլլիմայական պայմաններին հետ, վորը հաղթահարելու համար պետք է կառուցել այնպիսի բերդեր, ինչպիսին և համընդհանուր պատենքը, ծանոթանալ կենդանիների հետ, վորոնց բավական է յերեք որ չկերակրել, վոր պետքի վոչնչանան մի քանի տարվա աշխատանքի արդյունքները: Պարզ է, վոր կոլտնտեսությունների նախագահների «կոնվենյան» փոփոխմամբ արտահայտվում է կոլտնտեսությունների ղեկավարման համար կուսակցության սահմանած մեթոդների ամենակույտ խախտումը: Այն մարդիկ, վորոնք պատրաստ են փոխել կոլտնտեսության նախագահին այնպես, ինչպես չրջգործկոմի գործադիրին, հալանորեն մոռանում են, վոր լեմինյան «չիա-մարադակվել հրամաններ արձակել միջակի մկատմամբ» կանոնը (Լենին, հատոր 16) ամբողջովին և լիովին պահպանում է իր ուժը մահ գյուղատնտեսական արտելի վերաբերմամբ: Այն փաստից, վոր յերեկվա մենատնտես չեփորն ու միջակ միանալով գյուղատնտեսական արտելում հանրայնացրել են արտադրության հիմնական միջոցները, միայն կուսակցության թշնամին կարող է անել այն հետևությունը, թե դրանով իսկ վորեն չափով թուլացել է լենինյան այն ուսմունքի նշանակությունը, վորը խոսում է բանվոր դասակարգի կողմից աշխատավոր գյուղացիությունը ղեկավարելու մեթոդներին մասին, ղեկավարությունը մերկապարանոց վարչարարությանը և կամայականությանը փոխարինելն անթույլատրելի լինելու մասին: Ահա թե ինչու այդ բնագավառում կարիք չեղավ կուսակցության կենտրոնական կոմիտեի այնպիսի վորոշմանը, ինչպիսին է 1932 թ. մայիսի 10-ի վորոշումը, վորն արգելել է չրջանային կազմակերպություններին, ինքնուկամ հանել աշխատանքից կոլտնտեսությունների անդամներին:

Ահա թե ինչու ԽՍՀՄ-ի կենտրոնական կոմիտեի և Ժողովրդական Հրատարակչական հատուկ վորոշում հեղափոխական որինակնություն մասին, վորի նպատակն է խիստ պատիժ սահմանել բոլոր նրանց համար, ովքեր կաշխատեն խախտել կոլտնտեսական շինարարության համար լենինյան կուսակցության սահմանած հիմնական սկզբունքները:

Այդ վորոշումը յեղում է նրանից, վոր բռնության սրբիմները կոլտնտեսությունների վերաբերմամբ, նպաստում են միմիայն կուլակին և աղավորություններին, թուլացնում են աշխատավոր գյուղացիության լայն մասաների վստահությունը դեպի ԽՍՀՄ-ի իշխանության քաղաքականությունը, խախտում են բանվոր դասակարգի և գյուղացիության դոգման ամրացնելու գործը, ուստի և չեն կարող հանդուրժել լինել ԽՍՀՄ-ի վորեն չրջանում:

8

Կառավարության ընդունած վորոշումները՝ հացամթերումների, անտառների մթերման պլանի և կոլտնտեսությունների, կոլտնտեսականների ու անհատական աշխատավոր գյուղացիների առևտրի զարգացման մասին, ինչպես և առևտուր անելու կառավարության ոահմանած կարգը, անխղիժորեն կապված են մի կողմից այն հարցի հետ, թե ի՞նչ է ներկայացնում կոլտնտեսությունը (գյուղատնտեսական արտելը) զարգացման տվյալ ստադիայում, իսկ մյուս կողմից՝ ապրանքաշրջանառության ծավալման աստիճանում գոյություն ունեցող այն խնդիրների հետ, վորոնք դնում է իր առջև կուսակցությունը:

Այդ վորոշումների ելությունը հայտնի չէ բոլորին:

Նրանք նվազեցնում են կոլտնտեսություններում և անհատական տնտեսություններում կատարվելիք հացամթերումների չափը 204 միլիոն փթով՝ համեմատած 1931 թ. պլանի հետ:

Նրանք կրկնապատիկ նվազեցնում են կոլտնտեսություններում, կոլտնտեսականների մոտ և անհատական տնտեսություններում կատարվող մսի մթերումների գործող պլանը:

Նրանք նպատակահարմար են դնում անասունների մթերման պետական պլանը կանոնավոր կերպով կատարող կոլտնտեսություններին, կոլտնտեսականներին և մենատնտեսներին լիակատար հնարավորություն տալ՝ անարգել վաճառելու շուկաներում իրենց անասունները:

Նրանք նպատակահարմար են դնում կոլտնտեսություններին և կոլտնտեսականներին հացամթերման պլանը կատարելուց և սերմացվի ֆոնդերը կազմելուց հետո, լիակատար հնարավորություն տալ վաճառելու իրենց հացի ավելորդ մասը:

Յեկ վերջապես նրանք սահմանում են, վոր կոլտնտեսությունների, կոլտնտեսականների և անհատական աշխատավոր գյուղացիների առևտուրը պետք է կատարվի շուկայում կազմվող գներով:

Պատական մթերումների չափը ճշտվել վորոշված է նախապես: Տեղական վոչ մի որդանին չի թույլատրվում վորեն նպատակով ավելացնել կամ նվազեցնել պետական մթերումների համար կառավարության սահմանած պլանը: Իսկ այդ հացահատիկային դժով նշանակում է, վոր հացամթերումների պլանը կատարելուց հետո, կոլտնտեսությունների և կոլտնտեսականների մոտ մնացած պարենամթերքների ու կերի բոլոր ռեսուրսները լիովին գտնվում են նրանց տրամադրության տակ և կարող են ոգտագործել իրենց հայեցողությամբ, իրենց տնտեսությունը բարելավելու ու ամրացնելու համար, անասնաբուծությունը ծավալելու, անձնական սպառումն ավելացնելու համար, կամ՝ շուկայում և իրենց կոլտնտեսական խանութներում անարգել վաճառելու համար: Անասնաբուծությունը դժով այդ նշանակում է, վոր կոլտնտեսությունների, կոլտնտեսականների և մենատնտեսների աճեցրած բոլոր անասունները նրանք կարող են ոգտագործել իրենց հայեցողությամբ, կամ անձնական սպառման համար, կամ շուկայում վաճառելու համար, յեթե կանոնավոր կերպով կատարել են պետական մթերումների կառավարության վորոշման համաձայն նվազեցված պլանը:

Այդ վորոշումներն անտարակույս ավելի մեծ չափով, քան ներկայումս, հուժեղացնեն ամբողջ կոլտնտեսության և յուրաքանչյուր առանձին կոլտնտեսականի շահադրդովածությունը՝ թե՛ ընդարձակելու իր հացահատիկային կոլեկտիվ տնտեսությունը և թե՛ անասուններ զարգացնելու անձնական կարիքների կամ վստահման համար: Հացամթերումները վերջանալուց և սերմացվի ֆոնդերը կազմելուց հետո, հացի մի մասը շուկայի գներով վաճառելու հնարավորությունը, անտարակույս, կուժեղացնի կոլտնտեսության ռեսուրսները, կավելացնի նրա չրջանառու միջոցները, ավելի հեշտությունը հնարավորություն կտա նրան՝ յուրաքանչյուր կոլտնտեսականի ընդհանուր աշխատանքին կոլտնտեսականի ունեցած և աշխուրդով հաշված մասնակցության համաձայն, կանոնավոր կերպով վճարել նրան հասանելիք փողային յեկամտի մասը: Կոլտնտեսականի բուժած անասունը շուկայում վաճառելու հնարավորություն իր հերթին ավելի կշահագործվի յուրաքանչյուր առանձին կոլտնտեսականին, վոր կոլեկտիվ տնտեսության հիմնական հանրային մասի հետ միասին աճի նաև նրա լրացուցիչ անձնական տնտեսությունը: Թիկնույն Ժամանակ պետական հացամթերումների նվազած չափը հնարավորություն կտա կոլտնտեսություններին, զիտակցաբար և ավելի հեշտությամբ կատարել ապրանքային արտադրությունը հանձնելու աստիճանում պետության հանդեպ իրենց ունեցած պարտավորությունները, մանավանդ վոր արդեն այս տարի կոլտնտեսությունների ավելի քան կես մասում հացը պետությանը հանձնվելու յե մեքենա-տրակտորային կայանների միջոցով և գրանով իսկ հենվելու յե պետության ցուցաբերած հսկայական, անմիջական արտադրական ունություն վրա:

Այդ վորոշումներն անմիջականորեն յեղում են նրանից, վոր գյուղա-

տնտեսական արտելը ներկայացնում է գյուղացիների կոլեկտիվին պատկանող մի ձեռնարկություն, վորը սակայն արտադրությունը վարում է պետությունը պատկանող հողի վրա և դրա վրա չափով արտադրության պետական միջոցների ուղևորմամբ (մեքենա-տրակտորային կայաններ)։ Գյուղատնտեսական արտելը, վորպես մի ձեռնարկություն, վորի տերը կոլտնտեսականներն են, իր արտադրանքը վաճառող ապրանքային տնտեսություն է։ Գյուղատնտեսական արտելը, վորպես կոլեկտիվ մի ձեռնարկություն, վորն իր արտադրությունը վարում է պետությանը պատկանող հողի վրա, դրա վրա չափով արտադրության պետական միջոցների ուղևորմամբ (մեքենա-տրակտորային կայաններ), իր ապրանքային արտադրանքի մի մասը պետության սահմանած չափով և գներով հանձնում է (վաճառում է) պետությանը։ Այստեղից առաջ և զարիս յերկու հոսանք, վորով ընթանում է խորհրդային տնտեսության և կոլտնտեսականների ապրանքային արտադրանքը՝ մի մասը պետությանը, պետության սահմանած չափով, մյուս մասը՝ սեփական հայեցողությամբ, գնում և շուկա կամ մեղմ է սեփական ապագան ֆոնդն ափելացնելու նպատակով։

Ահա թե ինչու, ավելի քան յերկու տարի առաջ, 1930 թ. մարտի 10-ին, Կենտրոնական Կոմիտեն իր վորոշման մեջ չեղտել էր, վոր գյուղատնտեսական մթերքները կոլտնտեսականների յնթարկելու դեպքում, անհրաժեշտ է միաժամանակ պահպանել շուկաները։ Կենտրոնական Կոմիտեն կուսակցական բոլոր կազմակերպություններին առաջարկել էր՝

«Կոլտնտեսականների յենթարկելով գյուղատնտեսական մթերքները, բայց չափով շուկաները, վերականգնել շուկաները, չսահմանափակել մթերքների վաճառումը, մասնավորապես կոլտնտեսականների մթերքների վաճառումը շուկայում»։

Ահա թե ինչու այն բացատրության մեջ, վոր տվել է ՍՄԷՄ Հողագործության Ժողովրդական Կոմիտեի տարը և կոլտնտեսականները ՍՄԷՄ-ի Կենտրոնական Կոմիտեի և Ժողովրդական հաստատած գյուղատնտեսական արտելի կանոնադրության 22-րդ կետի առթիվ, վորոշված է, վոր կոլտնտեսությունը հանձնում է վոր թե իր ամբողջ ապրանքային արտադրանքը, այլ նրա մի մասը միայն՝ պետության սահմանած չափով և վորոշ նորմաներով, իսկ ընդհանուր բերքի մնացած ամբողջ մասան, թե՛ հացահատիկային և թե՛ վոչ հացահատիկային շրջաններում, լիովին մնում է կոլտնտեսության տրամադրության տակ»։

Միանգամայն պարզ է, վոր այս գարնանը կոլտնտեսական առևտրի մասին ընդունված բոլոր վորոշումները յեկում են գյուղատնտեսական արտելի այդ ընդլայնի, մի կազմակերպության, վորտեղ գյուղացուն ամենից ավելի մտնելի է հասկանալի ձևով կոլտնտեսության ու կոլտնտեսականի հետևելի է հետ, վորտեղ կոլտնտեսությունը պատկանող և կոլտնտեսության մեջ շոցները, դուրակցված են արտադրության պետական միջոցների հետ (մեքենատրակտորային կայաններ), վորտեղ ձեռնարկության տերերը հանդիսանում են կոլտնտեսականները, իսկ հողը պետական է, վորտեղ հիմնական հանրային տնտեսությունը շաղկապված է կոլտնտեսականների լրացուցիչ անձնական տնտեսության հետ։

Մյուս կողմից, կոլտնտեսական առևտրի ծավալման մասին կառավարության վորոշումների այդ ամբողջ խումբն անբաժանելիորեն կապված է գյուղի և հայրենի միջև ապրանքաշրջանառության ընդարձակման մասին կոլտնտեսական կոմիտեի ընդունված նախորդ վորոշումների հետ։

Բոլորին հայտնի յեն այն ջանքերը, վոր թափվում են Կուսակցության Կենտրոնական Կոմիտեի կողմից քաղաքի և գյուղի միջև ապրանքաշրջա-

նառաջյան ծավալման համար, խորհրդային առևտրի ընդարձակման համար։

Հայտնի յե, թե Կենտրոնական Կոմիտեի կողմից 30 թ. դարձան ինչպես պատասխանողներին մի շարք կազմակերպությունների՝ համատարած կոլեկտիվացման հանդուժողությունների առթիվ՝ առևտրի լիկվիդացիային ձեռնարկելու «ձախ» փորձերը։

Ժողկոմխորհի, Կենտկոմի և Յենտրոսայուզի անցյալ տարվա դիմումը, վորպես կոոպերացիայի գլխավորադույն խնդիր առաջադրեց ձախ կերպ դարձացնել խորհրդային առևտուրը։

Կենտրոնական Կոմիտեի պլենումի վորոշումները (1931 թ. հոկտեմբերին) խարազանում են կոոպերատիվ առևտրական ապարատի այն աշխատողներին, վորոնք չեն կարողանում «ապրանքների մեքենայական բաշխման ուղիներից անցնել խորհրդային առևտրի ծավալման ուղիներին»։

Յեվ վերջապես, 1932 թ. փետրվարին, 17-րդ կուսկոնֆերանսը, յերկրորդ հնդամյա պլենի բնույթի հարցերի առնչությամբ խնդիր է դնում «Կենտրոնացված բաշխման սխեմայի վորոշումները ծավալուն խորհրդային առևտրով», «նախապատրաստել ապրանքների բաց թողնելը նորմավորելու վերացումը», իսկ այդ բանի ճանապարհը, ամենից առաջ, տեսնում է ապրանքաշրջանառության ամեն կերպ ծավալման մեջ։

Ավելին, կոնֆերանսի բանաձևն ընդգծում է ապրանքաշրջանառության առաջնակարգ նշանակությունը տնտեսության վերելքի բայց չեղելի յեն տեմպի ապահովման ամբողջ գործի համար։ «Մթերատրականական անցնելու» առաջարկը, «սոցիալիզմի դարձացման տվյալ ստադիայում վորդի մահացման» մասին դատողությունները կոնֆերանսը խարանում է վորպես հակաբայցն վերջյան «ձախ» ֆրակ։

Ահա թե կուսակցության բոլոր հիմնական դեկլամետներն ի՞նչպես են դիտում ապրանքաշրջանառության ծավալման հարցը։

Ճիշտ նույն կետին, խորհրդային առևտրի ծավալման խնդրին մն վերաբերում նաև Կենտկոմի և Ժողկոմխորհի նոր վորոշումները կոլտնտեսական առևտրի ծավալման մասին, քաղաքի մատակարարման գործում, մթերածանման թեթեւի հետ միասին, նաև առևտրի մեթոդի կիրառման մասին։

Ժողկոմխորհի և կուսակցության Կենտկոմի վորոշումները, պետական մթերածանման մեթոդի հետ միասին նաև գյուղատնտեսական մթերքների առևտրի ծավալման մեթոդի մասին նոր ուժով խփում են քաղաքի և գյուղի միջև ապրանքաշրջանառության ծավալման խնդիրներին քայլադրողական ու «ձախ» արհամարհանքին։ Այդ վորոշումները պահանջներով պետական մթերածանման մեթոդի վերելքի, կոլտնտեսական առևտրի միջոցով ուժեղացնելով գյուղատնտեսական մթերքներով քաղաքի մատակարարման լրացուցիչ աղբյուրը, դրանով իսկ բարելավում են քաղաքի և գյուղի միջև ապրանքաշրջանառության պայմանները, հեղացնելով հետադարձ, խորհրդային առևտրի ծավալման առնչությամբ, քարտային սխեմայի վերացումը։

Այն փաստը, վոր կոլտնտեսությունների և կոլտնտեսականների առևտուրը կատարվում է շուկայի դներով, վոր մի չափով չի հակասում վերև առաժին։

Կոլտնտեսական առևտրի ծավալման մեր արդեն ունեցած դեռևս անբաժանելիորեն կարճ փորձը ցույց է տալիս, վոր մի շարք շուկաներում նկատվում է գյուղատնտեսական ապրանքների մեծ չափով հրապարակ բերվելը և դրա կապակցությամբ շուկայի չափազանց ուժեղացած գների վորոշ իջեցում և հետադարձ պետք է հաշվի առնել այն, վոր պետության ձեռքում, նաև պետական մթերածանման չափի կրճատումից հետո յե, մնում են հացահատիկի և մսի հեղացական ֆոնդեր, վորոնք հանձնվում են խորհրդային տնտեսության և կոլտնտեսությունների կողմից պետական գներով, վոր պետության ձեռքում գտնվում են լայն սպառման ապրանքների շարունակ առաջ ֆոնդերը, վոր այդ ֆոնդերը հանդիսանում են լավագույն լծակը կարգա-

Վորելու համար չուկայի կոլտնտեսական առևտուրը և լավագույն միջոցն ապահովելու համար այն, վոր կոլտնտեսական առևտուրը դասնա խորհրդային առևտրի հորատելուն հուններից մեկը:

Ով այդ չի հասկացել, նա չի հասկացել, վոր կոլտնտեսական առևտրի մասին յեղած վորոշումները կապված են մի կողմից այն բանի հետ, վոր դյուղատնտեսական արտելը հանդիսանում է կոլտնտեսական շարժման տվյալ ստորիայի դիտարկում, հիմնական ու գերակշռող ձևը, և մյուս կողմից՝ կապված են վերջին յերկու տարվա ընթացքում խորհրդային առևտրի ծաղիլման մասին յեղած բոլոր վորոշումների հետ — նա չի հասկացել կենտրոնական կոմիտեի վորոշումների իմաստը, նշանակությունն ու նպատակը:

10

Կոլտնտեսական առևտրի մասին յեղած վորոշումներն անխելիորեն կապված են բանվոր դասակարգի և դյուղացիության դաշինքի արմատական հարցերի հետ: Բանվոր դասակարգի և դյուղացիության գոգման ամրապնդման խնդիրը, վորքանով ներկայումս ամբողջ դյուղացիական մասսայի մոտ 60 տոկոսը մտնել է կոլտնտեսությունները, մեծ չափով հանդիսանում է կոլտնտեսական դյուղացիության հետ գոգման խնդիրը: Մոտ 15 միլիոն անհատական տնտեսությունների կոլտնտեսություն մտնելը խոշոր չափով հեշտացրել է գոգման հնարավորությունը, ուժեղացրել է այդ կապը և այդ գոգմանը ավել է նոր, առաջվանից շատ ավելի հզոր ֆունդամենտ: Յեվ այդ հասկանալի չէ: Այլ բան է դաշնակցել մենատնտես միջակի ու նույնիսկ չբավորի հետ, վորի տնտեսությունը հիմնված է մանր մասնավոր սեփականատիրության վրա, այլ բան է դաշնակցել կոլտնտեսական դյուղացիության հետ, վորի տնտեսությունը հիմնված է խոշոր հանրայնացված սեփականության վրա: Առաջին դեպքում մենք ունենք դյուղացիական մանր-սեփականատիրական տնտեսություն, վորն անընդհատ ծնում էր կապիտալիստական ելեմենտներ: Մյուս դեպքում՝ մենք ունենք հասարակական տնտեսություն, վորն իր զարգացման հետ համաչափորեն ավելի ու ավելի յե ամրանում վորպես սոցիալիստական տնտեսություն:

Դա նշանակում է, վոր կոլտնտեսություններին անցնելով, մենք հասնում գոգման բարձրագույն ձևին, գոգումն ավելի ամուր դարձավ — կարելի չէ ասել, վոր նա ավելի կայունացավ, քան խորհրդային յերկրի զարգացման վորեւե այլ ժամանակաշրջանում: Զուր չեք, վոր խորհուրդների 6-րդ համագումարի վորոշումների մեջ այնպիսի հստակություններ ձևակերպված է այն փաստը, վոր դյուղացիության մեծ մասի կոլտնտեսական ուղին անցնելը նշանակում է «խորհրդային իշխանության համար դյուղում իսկական ամուր հենարանի» ստեղծումը:

Սակայն այս բոլոր ապառի չի հետևում, վոր գոգման ամրապնդման աշխատանքներին արդեն կարելի չէ անհրաժեշտ ուշադրությունը չհատկացնել:

Ինքնին հասկանալի չէ, վոր այժմ գլխավոր նշանակություն ունի արտադրական գոգումը: Միայն այն փաստը, վոր այս դարնան կոլտնտեսական քանքի կեսից ավելին ընդգրկված է ՄՏ կայանների կողմից, վոր, դրանով իսկ, այս դարնան բոլոր կոլտնտեսականների կեսին ցույց է տրված ամենից ավելի իրական ողնություն՝ արտադրական գոգում, ապացուցում է արտադրական գոգման ամբողջ ուժն ու ամբողջ նշանակությունը: Սակայն դրան հետ միասին, ինքնին հասկանալի չէ, վոր արտադրական գոգում աշխատավոր դյուղացիության հետ յեղած գոգումը, վորը յերեկվա միջակին դարձրել է կոլտնտեսական — բանվոր դասակարգի և խորհրդային իշխանության հենարանը դյուղում — և վոր մի չափով չի վերացրել սպառողական ապրանքների առևտրի գոգում յեղած գոգումը: Ավելին, արտադրական գոգման հետագա ամրապնդումը միաժամանակ պահանջում է քաղաքի և դյուղի միջև ապրանք-

58-09691 / 1008 / 34885

քաղաքնառություն գոգում, լայն սպառման ապրանքների գոգում ամրապնդումը:


Ինքնին հասկանալի չէ, վոր բավական չէ միայն դյուղացիական ապրանքների առաջարկների անը չուկաներում: Այստեղ պետք է և պարտադիր է քաղաքից դեպի գյուղ ապրանքի լրացուցիչ հանդիսական հոսանք: Միայն չայն սպառման արդարանքների առաջարկի նման անը կայուն ֆունդամենտ կստեղծի ապրանքաշրջանառության ամբողջ գոգմի ծավալման համար: Իսկ ինդուստրացման ընթացքը հնարավորություն է տալիս մեղ ամենակարճ ժամկետում անցնելու լայն սպառման ֆունդերը: Հատկապես այդ բանը նկատի ունեք ընկ. Ստալինն իր գեկուցման մեջ 16-րդ կուսհամագումարում, յերբ ասում էր. —

«Մինչև այժմ մենք խնայողություն եյինք անում ամեն բանում, նաև թեթև արդյունաբերության հաշվին, վորպեսզի վերականգնենք ծանր ինդուստրիան: Սակայն ծանր ինդուստրիան մենք արդեն վերականգնել ենք: Այն հրաժեշտ է այդ ավելի ծավալել: Այժմ մենք կարող ենք չրջադարձ կատարել դեպի թեթև արդյունաբերությունը և այն առաջ շարժել արագացրած տեմպով: Մեր արդյունաբերության մեջ նոր յերեւույթն, իմիջի ալյուց, այն է, վոր մենք այժմ հնարավորություն ունենք արագացրած տեմպով զարգացնելու և՛ ծանր և՛ թեթև արդյունաբերությունը» (Ստալին, «Լենինից մի հարցերը», էջ 697):

Արդյունաբերության գոգում դյուղի համար ապրանքի արտադրության հնարավորություններն անել են մեծ չափով: Միայն վերջին յերեք տարվա ընթացքում արդյունաբերության հիմնական ֆունդերը և արտադրանքն անել են յերկու անգամ, դրա հետ միասին անել է դյուղատնտեսական հումքի արտադրությունը, վորը հիմք է լայն սպառման մի շարք ապրանքների արտադրության համար (մասնավորապես բամբակ-թելախուրձի հալածումն ու մթերումը իՍՍՀՄ-ում 1928 թ. կադում էր 14,9 միլիոն փուլ, իսկ 1931 թ.վին, — բամբակադործության մեքենայացման և բամբակացան չրջաններում կոլեկտիվացման հաղթանակի հիման վրա, — արդեն հասել է 24,5 միլիոն փուլ):

Քաղաքի և դյուղի միջև ապրանքաշրջանառության ծավալման և գոգման ամրապնդման խնդիրների առնչությամբ ընկ. Ստալինը հատկապես սրեց լայն սպառման, առանձնապես գյուղական սպառման առարկաների չուկայի ֆունդի ընդարձակման հարցը: Այդ կապակցությամբ կենտրոնական կոմիտեն մի կողմից ստուգեց և խստորեն կրճատեց ապրանքների այն ֆունդերը, վորոնք մինչ այժմ վերցվում եյին ժողկոմատների և տնտեսական մարմինների կողմից իրենց պետքերի համար, մյուս կողմից՝ հնարավորություն ստեղծեց հետագայում հսկայական չափով ավելացնելու լայն սպառման ապրանքների արտադրությունն արդյունաբերության բոլոր ճյուղերում, գրանց թվում նաև մետաղադործության գոգում: Այդ բանը հնարավորություն ստեղծեց ավելացնելու դյուղն ուղարկվելիք արդյունաբերական ապրանքը 604 միլիոն ռուբլով՝ Պետալանի սահմանածից բացի: Մի շարք գործարաններ արդեն արձագանգում են կենտրոնական կոմիտեյի նախաձեռնությունը՝ ծավալելով լայն սպառման ապրանքների արտադրությունը: Կենտրոնական կոմիտեյի հատուկ հանձնաժողովն որ-որի հետևում է, թե տնտեսավարներն ինչպես են կատարում լայն սպառման ապրանքների արտադրության ծավալման առաջադրանքները:

Ինքնին հասկանալի չէ, վոր կենտրոնական կոմիտեյի կողմից պատահականորեն չի, վոր միաժամանակ միջոցառումներ են ծավալվում կոլտնտեսական առևտրի գոգում և լայն սպառման ապրանքների արտադրության գոգում: Բանն այն է, վոր լայն սպառման, առանձնապես գյուղական սպառման ապրանքների արտադրությունը, ներկա մոմենտում հանդիսանում է քաղաքի և գյուղի կապի ամրապնդման արմատական հարցերից մեկը, իսկ դաշին ամ-



քաղաքական գործը, դա բանվորա-գյուղացիական պետության ամրապնդման գործն է, վոր հիմնված է բանվոր դասակարգի և գյուղացիության գաղափարների վրա:

11

Մենում է քննելու մի հարց ևս: Կուլակի գործակալները և կապիտալիզմի ջատագույնները հանձին աջ ուղորդումներով, տրամադիր են դրադվելու այնպիսի խոսակցություններով, վոր, իբր կոլտնտեսական առևտրի ծավալումը նշանակում է՝ խորհրդային իշխանության անցումը: Նեպի այն ետապին, վորը մենք ունեցինք 1921—22 թվականներին:

Սխառագամայն բացահայտ է նման պնդումների ամբողջ ծեծադելիսությունը, պնդումներ, վորոնք թելադրվում են, ամենից առաջ, թշնամությունով դեպի կոմունիստական կուսակցության քաղաքականությունն այնպիսի մարդկանց կողմից, վորոնք կուլակի թաղման ժամանակ, կուլակի հետ ամենասուր պայքարի ժամանակաշրջանում, փաստորեն քարոզում էին դաշն կնքել կուլակի հետ, և վորոնք, այժմ, յերբ կուլակությունը հիմնականում լիկվիդացվալիս յե յենթարկվել մի շարք կարևորագույն չրջաններում, հեռու չեն կատարելու այն միջոցառումների նկատմամբ, վորոնք ձեռնարկվում են խորհրդային իշխանության կողմից միությունն աշխատավոր գյուղացիության հետ ամրապնդելու համար:

Կուսակցությունը պաշտպանեց գյուղացիական մասսաների կողմից ուսաղադրված գյուղատնտեսական արտելը, վորպես կոլտնտեսական շարժում հիմնական ձևը, և անշեղորեն, տարի առ տարի, խստորեն հարվածում է բոլոր նրանց, ով փորձում է ցատկելու գյուղատնտեսական արտելի ձևի վրայով:

Կոլտնտեսությունների մեջ միացած գյուղացիներին կուսակցությունն ոգնեց զուգընթացաբար վորնչացնելու կուլակային կաբալը՝ լիկվիդացիայի յենթարկելով կուլակությունը, վորպես դասակարգի, գլխավոր գյուղատնտեսական շրջաններում:

Կուսակցությունը, ուժեղ թափով զարգացնելով անասնաբուծական խորհրդատնտեսությունները և ամեն կերպ ոժանդակելով կոլտնտեսական ֆերմաներին, միաժամանակ ձգտում է այն բանին, վորպեսզի այդ հանրայնացված տնտեսության հետ միասին, աճի կոլտնտեսականի անհատական անասնաբուծական տնտեսությունը:

Կուսակցությունը գյուղի իր ամբողջ գործնական աշխատանքում հաշվի չի առնում գյուղատնտեսական արտելի ետապի յերկարատևությունը և վրձնականորեն բնումը խեղդում է այդ ետապից հաջորդ ետապին անցնելը մեքենայորեն արագացնելու ամեն տեսակի փորձերը:

Կուսակցությունը պայքարում է հեղափոխական որինականության ամրապնդման համար, ընդդեմ կոլտնտեսականների նկատմամբ մերկապարանոց վարչարարական մեթոդների գործադրմանը:

Կուսակցությունը պայքարում է քաղաքի և գյուղի միջև ապրանքաշրջանառության ծավալման համար, դեպի խորհրդային առևտրի հունն և ուղղում կոլտնտեսական առևտրի հոսանքը:

Կուսակցությունը գյուղատնտեսական մթերքների հոսանքի հանդեպ կազմակերպում է լայն սպառման ապրանքների արտադրությունը, զլայն սպառման ապրանքների գործը դարձնում է բանվորական լայն մասսաների գործը:

ՍՍՀՄ-ի զարգացման բոլոր ետապներում կուսակցությունը կիրառում է գյուղացիական-աշխատավորական մասսաների հետ զորման լենինյան պատգամը:

Կոմունիստական կուսակցության կիրառած միջոցառումների այս օրագր թվարկումից միանգամայն բացահայտ է, վոր խորհրդային իշխանության նահանջի մասին այստեղ կարող են խոսել միայն անհուսալի աջ ուղորդողներ:

ներք, կամ նրանց ոգնականները՝ «ձախերի» բանակից, վորոնք սոցիալիզմի ուղղությունով հարձակումը դեպի առաջ չեն պատկերացնում ըստ Լենինի ու Ստալինի, այլ ըստ պարոն Տրոցկու, այսինքն՝ վոր թե բանվոր դասակարգի ու աշխատավոր գյուղացիության միությունը, այլ առանց աշխատավոր գյուղացիության և ընդդեմ նրա:

Այն մարդիկ, վորոնք չաղակրատում են Նեպի առաջին ետապին վերադառնալու մասին, քաղաքավարի ասած, ընդդ են անցկացրել խորհրդային իշխանության 11 տարիները և վոր մի բան չեն հասկանում այն մասին, թե խորհրդային յերկիրն ի՞նչ եր ներկայացնում իրենից այդ առաջին ետապում, և ի՞նչ է ներկայացնում ՍՍՀՄ-ն իր զարգացման ներկա ետապում:

Իսկապես, համեմատենք մեր յերկրի եկոնոմիկան այն ժամանակ և այժմ: Պաշտպանելով և բացատրելով նոր տնտեսական քաղաքականության անցնելու անհրաժեշտությունը, ընկ. Լենինը թվարկել է տարբեր հասարակական տնտեսական ձևերի այն ելեմենտները, վոր գյուղություն ունեցին ՍՍՀՄ-ում:

«1. Նահապետական, այսինքն՝ նշանակալից չափով փակ գյուղացիական տնտեսություն:

2. Մանր ապրանքային արտադրություն (սրան վերաբերում է գյուղացիության այն մեծամասնությունը, վորը հաց է ծախում):

3. Մասնավոր-սեփականատիրական կապիտալիզմ:

4. Պետական կապիտալիզմ:

5. Սոցիալիզմ:

Ռուսաստանն այնքան մեծ է և այնքան ալյազան, վոր այս բոլոր տարբեր տիպի հասարակական-տնտեսական ձևերը զուգորդվում են նրա մեջ: Դրուության յուրահատկությունը հատկապես դրանումն է կայանում:

Հարց է առաջ դալիս, վոր երեմենտներն են դերակշռում: Պարզ է, վոր մանր-գյուղացիական յերկրում դերակշռում է, և չի կարող չդերակշռել, մանր-բուրժուական տարերը, — հողագործների մեծամասնությունը, — հսկայական մեծամասնությունը, մանր ապրանքային արտադրողներ են» (Վ. Լենին, հատոր 26-րդ, եջ 322):

Ի՞նչ ունենք մենք այժմ, յերբ անցել է ավելի քան 10 տարի: Իհարկե, դեռ չի անհայտացել մանր ապրանք արտադրողը՝ հանձին անհատական-գյուղացիական տնտեսության: Իհարկե, մանր-բուրժուական տարերի ելեմենտները դեռ պահպանվում են նաև գյուղատնտեսական արտելի մեջ, վորքան վոր պահպանվում է վորոշ անհատական տնտեսություն կոլտնտեսականի համար, վորքան վոր պահպանվում է չուկան, ուր կոլտնտեսությունն ու կոլտնտեսականն ուղարկում են իրենց ապրանքային արտադրանքի մի մասը, սահմանված քանակով հացահատիկը պետության հանձնելու իրենց պարտականությունը կատարելուց հետո:

Իհարկե, մանր-ապրանքային արտադրությունը դեռ զուգորդվում է սոցիալիստական տիպի այլ հասարակական-տնտեսական ձևերի հետ:

Սակայն, գլխավորն ու հիմնականը դա չէ, այլ այն, վոր մեր յերկրի խորշորագույն մասում, ՍՍՀՄ-ի կարևորագույն գյուղատնտեսական շրջաններում, գյուղացիների մեծամասնությունը մտել է կոլտնտեսություն, և կոլտնտեսությունները դարձել են հացահատիկի ու տեխնիկական կուլտուրաների հիմնական արտադրողները մեր յերկրում: Դա նշանակում է, վոր ընկ. Լենինի, վորպես դերակշռող թվարկած առաջին և յերկրորդ ձևերը դադարել են դերակշռող լինելուց և հիմնականում փոխարինվել են, համեմատյալ դեպս մեր յերկրի կարևորագույն գյուղատնտեսական շրջաններում, իրենց սոցիալիստական տնտեսության ձևով: Իսկապես, չե՞ վոր փաստ է այն, վոր կոլտնտեսությունները, վորոնք 1928 թվին գյուղացիական տնտեսության հացահատիկային արտադրանքի 1—2 տոկոսն էին կազմում, 1931 թվին ամբողջ գյուղացիական հացահատիկային արտադրանքի 60 տոկոսը տվին: Իսկապես, փաստ է այն, վոր անընդհատորեն աճում են տնտեսության

և գյուղատնտեսական արտերի հասարակական-սոցիալիստական հիմունքները (1928 թ. մենք միայն մեկ մեքենատրակտորային կայան ունեւինք, 1930 թ. զարնանք՝ մենք ունեւինք միայն 158 ՄՏ կայան, իսկ 1932 թվի զարնանք՝ 2-200 ՄՏ կայան, վերոնք իրենց աշխատանքով ընդգրկեցին բոլոր կոլտնտեսական ցանքերի կիսից ավելին)։

Առաջ գերակշռող փակ և մանր արդյունքային գյուղացիական արտադրությունը փոխարինվում էր, համենայն դեպս ըստ կարեւորագույն կոլտնտեսականների և շրջանների, սոցիալիստական արտադրությամբ՝ վոչ միայն կոլտնտեսությունների դժով, այլև խորհրդային կոլտնտեսությունների դժով։ Նորից փաստ և այն, վոր 1931 թվին, բոլոր սիստեմի խորհրդային կոլտնտեսությունները, չնայած մեր յերկրի արեւելքում եղած յերաշտին, պետությունը հանձնեցին 108 միլիոն փութ հաց (միայն մի քիչ պակաս 1927 թվին կուլակների շուկա հանած քանակությունից — 126 միլիոն փութից)։

Մեր յերկրի հասարակական-տնտեսական ձեւի յերրորդ կարեւորագույն ելմենտը Լենինն անվանել է «մասնավոր սեփականատիրական կապիտալիզմ»։ Դրա կողմը, վորքան վոր խոսքը վերաբերում է գյուղատնտեսական արտադրությանը, հանդիսանում է կուլակը։ Բոլորին հայտնի յե, վոր վերջին յերեք տարվա ընթացքում, համատարած կուլակտիվացման իրագործման պրոցեսում, կուլակությունը, վորպես դասակարգ, հիմնականում լիկվիդացիայի յե յենթարկվել մեր յերկրի հիմնական գյուղատնտեսական շրջաններում։

Նշանակում է, վոր խոշոր սոցիալիստական արտադրությունը (խորհրդային տնտեսական շրջաններում, վորպես հիմնականում ու գերակշռող փոխաբիւն է վոչ միայն սոսկ գերակշռող փակ գյուղացիական տնտեսության միջակների մանր-ապրամբային արտադրությամբ, այլև մասնավոր սեփականատիրական կապիտալիզմին գյուղում, — կուլակությամբ, վորը հիմնականում լիկվիդացիայի յե յենթարկվել համատարած կուլակտիվացման իրագործման պրոցեսում։

Ներկա զարնանացանի կամպանիայի նախնական հանրադրման ամբողջությամբ հաստատում է վերև ասածը, և իսկապես, ցանքի ամբողջ տարածության չորս հինգերորդը զբաղվել են կոլտնտեսություններն ու խորհրդային տնտեսությունները, իսկ մենատնտեսների ցանքը զարնանացանի տարածության հագլիվ մեկ հինգերորդը։

Այդ տեղի յե ունեցել, չնայած արեւելյան շրջաններում անցյալ տարվա յերաշտի պատճառած դժվարություններին, չնայած այն բանին, վոր առանձին շրջաններում տեղական մարմիններին կողմից, հացամթերման ժամանակ, թույլ են տրվել սխալներ, վորոնք հարված են հասցրել կոլտնտեսական արտադրությանը։

Այն փաստը, վոր ցանքի ամբողջ տարածության չորս հինգերորդը զբաղվել են կոլտնտեսություններն ու խորհրդային տնտեսությունները, հանդիսանում է լավագույն ապացույցը ՍՍՀՄ-ում սոցիալիստական գործի իսկական կայունության, լավագույն ապացույց այն բանի, վոր սոցիալիզմը ՍՍՀՄ-ում վերջնականապես հաղթանակել է։

Անցած տարւ տարվա ընթացքում ՍՍՀՄ-ի տնտեսական կառուցվածքում տեղի ունեցած փոփոխություններից բոլորում է մասնավորի դերի այլ բնույթը գյուղատնտեսական մթերքների առևտրի ծավալման գործում։ Այն ժամանակ, կոոպերացիայի բացակայության դեպքում, և այն փաստի առկայությամբ, վոր յերկու տասնյակ միլիոն մանր գյուղացիական տնտեսություններին հակադրված էր քայքայված արդյունաբերությունը, միանգամայն անխուսափելի և պարտադիր էր այն, վոր սկզբնական շրջանում, վորպես միջնորդ քաղաքի և գյուղի միջև, հրապարակ դուրս էր դալիս մասնավորը։ Այդ մասնավորն աճեց քաղաքի և գյուղի միջև միջնորդություն

անելով և զբաղեցնել իսկ ստացվեց միանգամայն անխուսափելի և վորոշ չափով խորհրդային իշխանության կողմից հանդուրժելի՝ մասնավոր սեփականատիրական առևտրական կապիտալի վերածնունդ։

Միանգամայն այլ դրույթուն և այժմ, յերբ մենք ունենք կոոպերացիա և պետական առևտուր՝ խանութների ամբողջ ցանցով, յերբ տնայնագործների հակայական մասը միացված է տնայնագործական-արդյունաբերական արտերներում, յերբ 15 միլիոն գյուղացիական տնտեսություններ միացված են 200-000 կոլտնտեսությունների մեջ, յերբ խորհրդային տնտեսությունները պետության տալիս են գյուղատնտեսական մթերքների համեմատաբար նշանակալից ֆոնդեր, յերբ լայն սպառման արդյունքների ֆոնդերն աճել են 10-յակ անգամ ավելի, քան առաջ, յերբ մեր գործարաններն որական արտադրում են 250 տրակտոր, վորոնցից կազմակերպվում են 300—400 կոլտնտեսություն ընդգրկող 10 նոր մեքենատրակտորային կայաններ։ Այս պայմաններում կոլտնտեսական առևտրի ծավալումը չպետք է նշանակի և չի նշանակում ագրատություն տալ մասնավորներին, սպեկուլյանտներին, միջնորդներին, վորոնք կցանկանային փող չահել ի հաշիվ կոլտնտեսականի և քաղաքային սպառողի։ Այդ տարրերն արդեն շատ լավ ծանոթացել են խորհրդային իշխանության ամուր ձեռքի հետ և նրանք կարող են միանգամայն հաստատ հավատացած լինել, վոր կոլտնտեսական առևտրի ծավալման հետ միաժամանակ, խորհրդային իշխանությունը ձեռք է հանում կառնի բոլոր միջոցները, բոլոր չտալու համար մասնավորի ծավալումը, բոլոր չտալու, վոր մասնավոր առևտրականները բաց անեն խանութներ ու կրպակներ, և արմատախիլ անելու միջնորդներին ու սպեկուլյանտներին, վորոնք փորձում են փող դիզել բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության հաշիվին։

12

Կրկին անգամ հիշեցնենք, թե ի՞նչպիսի գործնական յեղրակացություններ են բոլորում կոլտնտեսությունների մասին կառավարության ընդունած բոլոր վորոշումները։

1. Ամբապնդել գյուղատնտեսական արտերը՝ վորպես կոլտնտեսական գլխավոր ձեւ զարգացման տվյալ ետադում։ Ստորեն պատժել, մինչև իսկ կուլակցությունից վտարել և դատի տալ գյուղատնտեսական արտերի ձեւի վրայից ցատկելու ամեն տեսակի փորձերը։ Վոչ մի բոպե չմոռանալ, վոր գյուղատնտեսական արտերի ամրացումը, արտերի տնտեսության բարելավումը, կոլտնտեսություններում ուղարկության կենտրոնացումը տնտեսական հարցերի վրա — գյուղում տարվող աշխատանքի կենտրոնական խրմդիրն է։

2. Բարելավել կոլտնտեսական արտադրության ղեկավարությունը։ Ղեկավարությունը չփոխարինել մերկ վարչարարությամբ։ Արապնդել հեղափոխական քրիմալնությունը, հիշելով, վոր գյուղացիական տնտեսությունների մեծ մասի կոլտնտեսություններ մտնելը վոչ միայն չի թուլացրել, այլ ընդհակառակն, ուժեղացրել է կառավարության սահմանած հեղափոխական որինականության սկզբունքների պահպանման նշանակությունը։ Ստորեն պատժել հեղափոխական որինականության բոլոր խախտողներին։

3. Ամբապնդել ՄՏ կայանները։ Լավագույն մարդիկ տալ ՄՏ կայաններին։ Լուծել այն խնդիրը, վոր արդեն 1933 թ. զարնան մեքենատրակտորային կայաններն ընդգրկեն կոլտնտեսությունների ամբողջ ցանքը, համենայն դեպս յերկրի հիմնական գյուղատնտեսական շրջաններում։

4. Միաժամանակ ոգնել գյուղատնտեսական արտերի անդամների անհատական «լրացուցիչ» տնտեսություններին, առանձնապես անասնաբուծության ասպարիզում։ Ոգնել կոլտնտեսականին անասնապահության գործում, հիշելով, վոր յուրաքանչյուր կոլտնտեսական պետք է ունենա իր կովը, մանր անասունը և ընտանի թռչունները։

5. Ողջնեղ կոլտնտեսական կադրերի անձանքը: Դադարեցնել կոլտնտեսութունների ղեկավարների այսպես կոչված՝ նշանակովի լինելը, վորն արժատապես խախտում է կենտրոնի հայտնի դիրեկտիվը: Հասնել այն բանին, վորպեսզի կոլտնտեսութունների ղեկավար կադրերը — վարչութայն անդամները, բրիգադավարները—համենայն դեպս յերկու-յերեք տարի մնան իրենց աշխատանքում, ուսումնասիրեն իրենց տնտեսութունը, սովորեն հասարակական տնտեսութուն կառավարելու գործը: Կոլտնտեսութունների ղեկավարութայն գործում ներգրավել լավագույն անկուսակցականներին, ամենաանողոք հակահարված տալով այն կոմունիստներին, վորոնք մտածում են, «թե կարող են իրենց սեփական ուժերով լուծել կոլտնտեսական շինարարութայն բոլոր խնդիրները» (Ստալին, «Լենինից մի հարցերը», էջ 622):

6. Սմեն կերպ ծավալել խորհրդային առևտուրը, նրանով փոխարինել ապրանքների կենտրոնացված բաշխման բյուրոկրատիկ սխառնմը: Ոժանդակել յուրաքանչյուր բաղադրում և շուկայում, ինչպես յերկաթուղային և ջրային ճանապարհներին, նույնպես և շոսներին վրա, կոլտնտեսութուններին, կոլտնտեսականներին և մենատնտես աշխատավոր դյուղացիներին՝ դյուղատնտեսական մթերքների առևտրի ծավալման գործում, անխնա խարազանելով ամեն տեսակի փորձերը, վորոնք ուղղված կլինեն վորևե միջոցով տապալելու կառավարութայն մայիսի 6-ի, 10-ի և 20-ի վորոշումներով սահմանված կոլտնտեսական առևտրի ծավալման կարգը:

7. Անշեղորեն վաճկացնել միջնորդներին և սպեկուլյանտներին, վորոնք կիրթնեն իրող աշխատել կոլտնտեսական առևտրին:

8. Ամրապնդել գոգումը լայն սպառման ապրանքների արտադրութայն ծավալման սթիմուլ: Լայն սպառման ապրանքների ծավալման գործը դառնում է հաղարարվոր գործարանների ու ֆաբրիկների գործը, ամբողջ տնայնագործական—արդյունաբերական կոոպերացիայի գործը: Այդ առթիվ հիշել, վոր լայն սպառման ապրանքների արտադրութայն և առևտրի ծավալման գործը կարևորագույն տնտեսական և քաղաքական գործ է, զորման կարևորագույն հերթական ողակը:

9. Առաջվա նման ջախջախել աջ ոպորտունիստներին, վորպես գլխավոր վտանգի, տվյալ ետապում, նմանապես նաև նրանց համախոհներին ու ողնակներին, հակահեղափոխական տրոցկիստներին:

Յեղ, վերջապես —

10. Անմիջապես ձեռնամուխ լինել բերքահավաքի կազմակերպմանը: Յուրաքանչյուր կոլտնտեսութուն և յուրաքանչյուր կոլտնտեսական պետք է իմանա —

ա) Յուրաքանչյուր կոլտնտեսութայն և կոլտնտեսականի պատվա գործն է և անվիճելի պարտականութունը, ամբողջովին կատարել պետական մթերութունների կառավարութայն սահմանած կրճատված պլանը:

բ) Վոր, համաձայն նախորդ սահմանված մթերման պլանի, կոլտնտեսութունների և կոլտնտեսականների անսահմանափակ տրամադրութայն տակ, սեփական սպառման և շուկայում ծախելու համար, կմնա այնքան ավելի մթերք, վորքան նա ավելի արտադրի, վորքան նա ավելի հավաքի և վորքան նա ավելի լավ կատարի բերքահավաքը:

Ժողկոմխորհի և Կենտրոնի վորոշումը բերքահավաքի մասին, վերացրել է անցյալ տարի կիրառվող սահմանափակումը վորոշ քանակից ավելի աշխոր ունեցած կոլտնտեսականներին մթերքով յեկամուտ տալու առթիվ: Դա նշանակում է, վոր այն կոլտնտեսականը, վորը կոլտնտեսութայն արտադրութայն մեջ ավելի աշխատանք է թափել, կստանա ավելի մեծ բաժին վոչ միայն յեկամտի դրամական, այլև մթերային մասից, համապատասխան այն բանի, թե վորքան աշխոր ունի նա:

Այդ վորոշումը սահմանում է կոլտնտեսականին վորոշ քանակութայն մթերքով ավանդ տալը, համապատասխան իր ունեցած աշխորների քանակի:

Նույն այդ վորոշումը բերքահավաքը լավ կատարող կոլտնտեսական բրիգադների և բրիգադիների համար սահմանել և յեկամտի բարձրացում 10-ից մինչև 20 տակոս, իսկ բերքահավաքը վատ կատարող բրիգադների և բրիգադիների համար՝ յեկամտի համապատասխան իջեցում:

Այդ բոլոր վորոշումներն ոժանդակում են դյուղատնտեսական արտերների կազմակերպչական—արտադրական ամրապնդման, վորոնք կառուցված են հետևյալ կանոնի հիման վրա — Յուրաքանչյուր կոլտնտեսական ստանում է կոլտնտեսութայն ընդհանուր յեկամտի այն մասը, վորը համապատասխանում է նրա մասնակցութայն չափին՝ ընդհանուր կոլտնտեսական աշխատանքի մեջ:

Բերքահավաքի լավ կատարումը, իրական պայքարը կորուստների դեմ, հնձված հացահատիկի անմիջապես դիզելը, նրա արագ կալումը, հացամթերման կիրառումը և յեկամտի բաշխումը՝ կառավարութայն վորոշումների հիման վրա, պետք է ամենուրեք ապահովեն այնպիսի դրութուն, վորպեսզի այն կոլտնտեսութունները, վորոնք լավ են ցանել, հավաքել ու կանոնավոր են կատարել նրանց համար սահմանված պետական մթերութունների պլանը, իրենց արամադրութայն տակ, սեփական սպառման համար, ունենան ավելի մեծ քանակութայն հաց, և համապատասխանորեն, այն կոլտնտեսականները, վորոնք կոլտնտեսական արտադրութայն մեջ ավելի մեծ աշխատանք են ներդրել, ստանան յեկամտի, ինչպես մթերային, նույնպես նաև դրամական մասից ավելի մեծ բաժին:

ԱՅՍՊԵՍ, ԲԵՐՔԱՎԱՔԻ ՀԱՄԱՐ ԹԱՆԿ Ե ՅՈՒՐԱՔԱՆՁՅՈՒՐ ՈՐՆ
ՈՒ ՅՈՒՐԱՔԱՆՁՅՈՒՐ ԺԱՄԸ: ԳՈՐԾԻ ԱՆՏԵՆՆԻՔ:



Պետքառի ոպարամ
Պատվեր 2582

Արքայից՝ Տ. Տերաթի
Տիրած 4000

ԳԻՆԵ 80 ԿՈՊ.

Я. А. ЯКОВЛЕВ
Об организационно-хозяйственном
укреплении колхозов и о развертывании
колхозной торговли

2013

ՀՀ Ազգային գրադարան

18/9



NL0051240

